

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ին: «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ին ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Գտնվելու վայրը՝ Վազգեն Սարգսյան 26/1, 4րդ հարկ, 411 սենյակ
Հեռ.՝ (37410) 58-23-22
Էլ. հասցե՝ info@fsm.am
Ֆաքս՝ (37410) 58-24-21
Կայք՝ <http://www.fsm.am>

Միրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ի դեմ կայացված որոշումները:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ը խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ Կենտրոնական բանկ

Գտնվելու վայրը՝ Վազգեն Սարգսյան 6, 0010, Երևան
Հեռ.՝ (37410) 59-26-97
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ (37410) 56-54-96
Կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք «ՄԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: